ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,
«ՖԱԲ ԼԱԲ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)-Ի
ՄԻՋԵՎ

ք. Երևան «01» ապրիլի 2024թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս նախարար Ժաննա Անդրեասյանի, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամը (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Մկրտիչ Այվազյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ (Հայաստան)-ը, (այսուհետ՝ ՀԲԸՄ), ի դեմս գլխավոր տնօրեն Վասկեն Յակուբյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, «Ֆաբ Լաբ Հայաստան» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Բաբկեն Չուգասզյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կողմեր»,

հաշվի առնելով, որ

- ՀԲԸՄ-ն իրականացնում է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն (ENI/2016/151410-1/9) ծրագիրը, որի նպատակն է խթանել Հայաստանի ստեղծարար տնտեսությունը՝ հզորացնելով ոլորտի մասնագետների ձեռնարկատիրական հմտություններն ու մրցունակությունը, ինչպես նաև աջակցելու անհատներին, հաստատություններին և ենթակառուցվածքներին՝ իրազեկման, վերապատրաստման և ֆիզիկական ու տեխնոլոգիական ներդրումների միջոցով,

- «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի շրջանակում անհրաժեշտ է հիմնադրել ստեղծարար ՖաբԼաբ (արտադրական լաբորատորիա), այսուհետ՝ Ծրագիր, Ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տարածքում,

- հիմնադրվող Ծրագիրը, որի նպատակն է տեխնոլոգիաների և թվային արտադրանքի միջոցով ապահովել կրթվելու, նորարարության և հայտնագործությունների համար անհրաժեշտ գործիքների, գիտելիքի և ֆինանսական միջոցների հասանելիությունը, կհանդիսանա արտադրական տարածք, որի միջոցով հասանելի կդառնան թվային արտադրանքի

ժամանակակից գործիքները, դասավանդման նորարարական մեթոդաբանությունը և մուտքը դեպի համաշխարհային ՖաբԼաբի ցանց և ուսումնական համայնք,

- Ծրագրի շահառուներն են՝ ստեղծարար ձեռնարկատերերը, անհատ արվեստագետները, ովքեր հետաքրքրված են ստեղծարար արտադրության և նախատիպերի ստեղծման նորարարական մեթոդների ուսուցմամբ և կիրառմամբ:

Ինչպես նաև այն, որ Կողմերը կնքում են սույն Հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և փոխադարձ պատասխանատվության ոգով,

Համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

ՆՊԱՏԱԿԸ

1 Սույն Հուշագրի նպատակն է ապահովել Ծրագրի շրջանակներում Կողմերի համագործակցությունը և օժանդակել գործակցությանը ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտում: Այդ համագործակցությունը պետք է իրականացվի Կողմերի լիազորություններին, գործառույթներին, ընթացակարգերին և որոշումներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

2.1 Սույն Հուշագիրը կնքելով Կողմերը որևէ ընկերություն կամ այլ իրավաբանական անձ չեն հիմնադրում:

2.2 Սույն Հուշագրի շրջանակներում Ակադեմիան պատրաստակամություն է հայտնում՝

2.2.1 հատկացնել պահանջվող համապատասխան տարածք Ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում,

2.2.2 աջակցել Ծրագրի հիմնադրման հետազոտական ուսումնասիրությանը՝ տրամադրելով շենքի ճարտարապետական, տեխնիկական և այլ տեղեկատվություն,

2.2.3 աջակցել Ծրագրի հիմնադրման գործընթացին՝ տրամադրելով համապատասխան մասնագետներ՝ նրանց վերապատրաստման և կարողությունների հզորացման նպատակով,

2.2.4 ապահովել տեղադրվող սարքավորումների անվտանգությունը, պատշաճ խնամքը և ֆունկցիոնալ միջավայրի սպասարկումը,

2.2.5 ապահովել Ծրագրի մատչելիությունը կրթօջախի ուսանողների, ինչպես նաև ստեղծարար ոլորտի լայն շրջանակի ու համայնքի համար,

2.2.6 նպաստել Ծրագրի հնարավորությունների համապարփակ օգտագործմանը, ընդգրկելով այն ուսումնական գործընթացում, որպես դասավանդվող առարկաների անբաժանելի մաս,

2.2.7 նպաստել Ծրագրի արդյունքների, ներառյալ մասնագիտական փորձի փոխանակման, ինչպես նաև ձեռնարկների, ուսումնական նյութերի տարածմանը,

2.2.8 ապահովել Ծրագրի կայունությունը և շարունակականությունը:

2.3 Սույն Հուշագրի շրջանակներում ՀԲԸՄ-ն պատրաստակամություն է հայտնում՝

2.3.1 հիմնադրել Ծրագիրը Ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տարածքում,

2.3.2 ձեռք բերել և տեղադրել նորարար տեխնիկական սարքավորումները՝ համապատասխան փորձագետների ներգրավմամբ,

2.3.3 աջակցել տրամադրված տարածքի կոսմետիկ վերանորոգմանը, որը կարող է անհրաժեշտ լինել, որպեսզի սարքավորումները պահպանվեն անվտանգ և ֆունկցիոնալ միջավայրում,

2.3.4 վերապատրաստել և աջակցել Ակադեմիայի անձնակազմին՝ Ծրագրի մեթոդաբանության/ուսումնական ծրագրի յուրացման գործընթացում, ներառյալ տեխնիկական վերապատրաստում սարքավորումների անվտանգության վերաբերյալ, նորարարական արտադրության նոր մոտեցումների ուսուցում,

2.3.5 ապահովել Ծրագրի շահառուների կարողությունների զարգացումը՝ թվային արտադրության գործիքների և մեթոդաբանության պատշաճ օգտագործումն ապահովելու նպատակով,

2.3.6 իրականացնել Ծրագրի կատարման ընթացքի մշտադիտարկում,

2.3.7 ապահովել Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածումը Հայաստանում:

2.4 Սույն Հուշագրի շրջանակներում Նախարարությունը պատրաստակամություն է հայտնում՝

2.4.1աջակցել Ծրագրի իրականացմանը,

2.4.2 խրախուսել համագործակցության շրջանակների ընդլայնմանը,

2.4.3 իրականացնել Ծրագրի մշտադիտարկում,
2.4.4 ապահովել Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածումը Հայաստանում:

2.5. Սույն Հուշագրի շրջանակներում Հիմնադրամը պատրաստակամություն է հայտնում՝
2.5.1 իրականացնել Ակադեմիայի մասնագետների վերապատրաստում և կարողությունների հզորացում,
2.5.2 կազմակերպել ճանաչողական այցելություններ Հայաստանի այլ գործող ՖաբԼաբ-եր՝ Գյումրու ուսանողների համար,

2.5.3 ապահովել Ծրագրի կայունությունը և շարունակականությունը:

ՀՈԴՎԱԾ 3
ԺԱՄԿԵՏԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ

3.1 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը ներառյալ:

3.2 Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել սույն Հուշագիրն այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:

3.3 Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 4
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

4.1 Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերի միջև ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդակցություն կատարվում է գրավոր՝ առձեռն, փոստով, սուրհանդակի միջոցով, ֆաքսիմիլային կապով կամ էլեկտրոնային փոստի հասցեով՝ ստորև նշված հասցեներով՝

Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ՝
Գլխավոր տնօրեն՝ Վասկեն Յակուբյան,
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/2
Էլ. փոստ. vaskeny@agbu.am

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ՝
Ռեկտորի պաշտոնակատար՝ Մկրտիչ Այվազյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 36
Էլ. փոստ.՝ tajonik@yahoo.com

ՀՀ Կրթության,. գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝
Նախարար՝ Ժաննա Անդրեասյան
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 3
Էլ. փոստ. secretariat@escs.am

«Ֆաբ Լաբ Հայաստան» կրթական հիմնադրամ՝
Գործադիր տնօրեն՝ Բաբկեն Չուգասզյան
Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մոլդովական 77
Էլ. փոստ. babken505@gmail.com

ՀՈԴՎԱԾ 5
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցությունը բացառիկ իրավունքներ չի վերապահում, և Կողմերից յուրաքանչյուրն ազատ է նմանատիպ հարաբերություններ հաստատել այլ անձանց հետ:

5.2. Կողմերից որևէ մեկի կողմից սույն Հուշագրի դրույթներից մեկը չկատարելը չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում Հուշագրի տվյալ դրույթից: Հուշագրի դրույթներից որևէ մեկի անիրագործելիությունը չի ազդում մյուս դրույթների գործողության վրա, եթե դրանք կարող են գործել առանց խնդրահարույց դրույթի կիրառման:

5.3. Սույն Հուշագիրը մտադրությունների մասին հուշագիր է, որն արտահայտում է Կողմերի՝ համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը:

5.4. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրարկման ընթացքում առաջացող ցանկացած տարաձայնություն կարգավորվում է համատեղ քննարկումների, փոխադարձ խորհրդակցությունների և փոխհամաձայնությունների միջոցով:

5.5 Սույն Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 օրինակից և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ Կողմերի պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչները ստորագրում են սույն Հուշագիրը ստորև նշված ամսաթվին, Երևան քաղաքում.

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝	ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆՈՒՆԻՑ՝	ՀԲԸՄ-Ի ԱՆՈՒՆԻՑ՝	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՈՒՆԻՑ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար	Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամ (Հայաստան)-ի գլխավոր տնօրեն	Ֆաբ Լաբ Հայաստան կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ժաննա Անդրեասյան	Մկրտիչ Այվազյան	Վասկեն Յակուբյան	Բաբկեն Չուգասզյան